Տեղեկանք

ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Լոռու մարզի Թումանյանի խոշորացված համայնքների ավագանու նիստերի վերաբերյալ

2016 թվականի փետրվարի 14-ին ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի, Տավուշի մարզի Դիլիջանի և Լոռու մարզի Թումանյանի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից ի վեր՝ այդ համայնքներում գումարվել և անց են կացվել ավագանիների հետևյալ քանակությամբ նիստեր.

Տաթև համայնքում՝ 6 նիստ, որոնց ընթացքում ընդունվել է թվով 32 որոշում,

Դիլիջան համայնքում՝ 8 նիստ, որոնց ընթացքում ընդունվել է թվով 44 որոշում,

Թումանյան համայնքում՝ 7 նիստ, որոնց ընթացքում ընդունվել է թվով 42 որոշում:

Վերոնշյալ համայնքների ավագանիները ձևավորվել են հետևյալ հարաբերակցությամբ.

Տաթև համայնքում՝ 11 ավագանու անդամներից 6-ը՝ բնակավայրերի ներկայացուցիչներ են, 5-ը՝ Շինուհայրի

Դիլիջան համայնքում՝ 15 ավագանու անդամներից 5-ը՝ բնակավայրերի ներկայացուցիչներ են, 10-ը՝ Դիլիջանի

Թումանյան համայնքում՝ 9 ավագանու անդամներից 6-ը՝ բնակավայրերի ներկայացուցիչներ են, 3-ը՝ Թումանյանի:

Ընդունվել են համայնքների ավագանիների կանոնակարգերը, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների թեկնածությունները ներկայացնելու և համաձայնեցնելու, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման, համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգերը հաստատելու վերաբերյալ որոշումները: Հաստատվել են համայնքապետարանների աշխատակազմերի կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, համայնքների ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատվել են համայնքների կազմում

ընդգրկված վարչական ներկայացուցիչների նստավայրերերը: Հաստատվել են համայնքների բյուջեները, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Ձևավորվել է վարչական ներկայացուցիչների ինստիտուտը, բնակավայրերի բնակիչներն այլևս հարկադրված չեն լինի որևէ ծառայություն ստանալու համար հասնել համայնքային կենտրոն: Վարչական ներկայացուցիչները վերապատրաստվել են, ապահովվել են կնիքներով և տեղերում տրամադրում են առաջնահերթ ծառայությունները: